«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցանող գնահատում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սուրիկ Թադևոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Սևանի Վ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոց»ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն _____ 2
2. Գնահատում _____ 3
3. Ուսուցանող գնահատում _____ 8
4. Եզրակացություն _____ 17
5. Օգտագործված գրականություն _____ 18

1.Ներածություն

Հիմարները նկատում են միայն մարդկանց թերությունները և անտեսում արժանիքները: Նրանք նման են այն ճանճերին, որոնք հավաքվում են մարմնի բորբոքված մասի վրա:

Աբու ալ Ֆարաջ

Մարդկանց սովորեցնելու համար հեռակա գիտելիքները բավական չեն. անհրաժեշտ է լսել նրանց հարցերը:

Մո-Ցզի

Կրթական բարեփոխումների ներկա քաղաքականությունը ենթադրում է գնահատման համակարգի հիմնավոր փոփոխություններ, որպեսզի գնահատումը՝ որպես ուսումնական գործընթացի վերջին քայլ, լինի հնարավորինս օբյեկտիվ և բացարձակ:

Տարիների մեր փորձը ցույց է տվել, որ դժվար է հասնել բացարձակ օբյեկտիվ գնահատման, որովհետև այդպիսի գնահատականը առաջին հերթին բխում է գնահատվող նյութի բովանդակությունից, ծավալից և գնահատողից, ուստի գտնում ենք, որ հատկապես ներկայիս դպրոցում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ձևավորող կամ ուսուցանող գնահատմանը: Սրանով առավելապես կարևորվում են գիտելիքի բովանդակությունն ու խորությունը, կարողությունների և հմտությունների կայունությունը: Այսինքն՝ ուսուցանող

գնահատումն ապահովում է գիտելիք՝ գիտելիքի համար, իսկ միավորային գնահատումն առավելապես պայմանավորված է տվյալ պահին աշակերտին գնահատելու պահանջով: Հետևաբար սույն աշխատանքում փորձելու ենք ապացուցել հետևյալ վարկածը. Ի նկատի ունենալով պետական և պետական առարկայական չափորոշիչների պահանջները՝ կարևորել ուսուցանող գնահատումը՝ որպես ուսուցչի գնահատման իրավասության ձև՝ միավորային գնահատումը թողնելով արտաքին գնահատում իրացնող պետական կրթական մարմիններին, որովհետև այս գնահատումը առավել մեծ հնարավորություն է ընձեռում ուսուցչին իրականացնելու ազատ և գիտակցված ուսուցում, նաև կրթական և գիտական պահանջների իրականացում:

2. Գնահատում

Գնահատումը բազմիմաստհասկացություն է: Լայն առումով գնահատումը փոխշահավետ հարաբերությունների արժևորումն է դրական կամ բացասական ուղղվածությամբ, որը բխում է անձի, հասարակական խմբի կամ տարբեր պետական միավորումների կողմից հաստատված նորմերից: Իսկ ի՞նչ է գնահատումը մանկավարժական տեսանկյունից: Սա տեղեկատվություն ստանալու գործընթացն է, որը չափում է աշակերտի զարգացման և պետության կողմից առաջադրված պահանջների, նրա համապատասխանության աստիճանը՝ նրա վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Այս գործընթացը պահանջում է ընդգրկուն տեղեկատվություն և ենթադրում է տարբեր ժամանակներում և տարբեր տեղերում բազմազան

ռազմավարությունների ու մեթոդների կիրառություն: Իդեալական տարբերակում գնահատումը ներառում է ամենօրյա գործունեության, իրական կյանքում սովորածի մասնակի կիրառությունների, որոշակի ձեռքբերումների դիտարկում, ինչպես նաև նյութի յուրացումը ստուգող թեստեր:

Գնահատումը հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառների, մասնավորաբար կրթական համակարգի առաջնային բաղադրիչներից է: Ցանկացած անձ, անհատ կամ խումբ գնահատված լինելու և՛ ցանկությունը, և՛ անհրաժեշտությունն ունի, ավելին՝ շատ խնդիրներ և թյուրիմացություններ ծագում են մարդկանց՝ ոչ համարժեք,սխալ գնահատված լինելու կամ ինքնագնահատման կարողության պակասի պատճառով:

Գնահատման խնդիրը ժամանակակից դպրոցի ամենաբարդ խնդիրներից մեկն է: Սովորողների կարծիքով՝ իրենց իրավունքների խախտման դեպքերն ամենից հաճախ կապվում են չհիմնավորված գնահատմանը: Նրանք դժգոհում են, որ գնահատման չափանիշները հստակ չեն, նախապես հայտնի չեն լինում իրենց, խմբային աշխատանքի ժամանակ չեն հասկանում, թե գնահատականը ում և ինչի համար է տրվել, շատ հաճախ էլ այդ գնահատականը դառնում է կարգապահական խախտումների համար տրված պատիժ: Դպրոցները դժգոհում են նաև, որ գնահատականը կախված է միշարք սուբյեկտիվ գործոններից:

Ուսուցչի ամենօրյա աշխատանքում գնահատումը նույնացվում է որոշակի աշխատանքների դիմաց դասամատյանում նշանակված գնահատականին, ընդ որում՝ այդ գնահատականի արդար լինելու հարցում շահագրգռված են ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցները.

- ✓ աշակերտները, քանի որ գնահատումը ուղղակիորեն վերաբերում է նրանց ուսումնական աշխատանքին և համարվում է որոշակի ձեռքբերման արդյունք,
- ✓ մանկավարժները, որովհետև գնահատումը նրանց հիմնական գործառույթներից մեկն է և ցույց է տալիս ոչ միայն սովորողների, այլև հենց իրենց աշխատանքի արդյունքը,
- ✓ դպրոցի տնօրենությունը, որին հետաքրքրում է դպրոցի ընդհանուր ուսման առաջադիմության վիճակագրությունը և գնահատման համակարգը՝ որպես ուսումնական գործունեության տեսակ,
- ✓ ծնողները և հասարակայնության ներկայացուցիչները,
- ✓ կրթական գործի վերադասմարմինները,
- ✓ տարբեր նախագծերի ղեկավարները և հետազոտողները:

Գնահատումն առավել ընդհանուր բնորոշմամբ կարող ենք ձևակերպել այսպես. «Գնահատումը պարբերական գործընթաց է, որը որոշում է ձեռքբերած արժեքներն ունշանակությունը»[1]:

Կրթության համակարգում գնահատման գործընթացը նրա բոլոր մասնակիցների (և առաջին հերթին ուսուցիչների ու աշակերտների) բաց համաձայնագիրն է և ոչ թե ճնշման գործիք: Գնահատման չափանիշները որոշվում են համատեղ և կարող են լրամշակվել:

Գնահատումը ուսուցման գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, ինչն էլ ապահովում է առարկայական չափորոշիչների (սովորողին ներկայացվող ցանկալի ևպարտադիր նվազագույն պահանջների երեք մակարդակները՝

[1] «Մարդ և հասարակություն» N4, 2009թ., էջ 25:

նվազագույն, միջին, առավելագույն) ու ծրագրերի կատարումը և նպաստում է սովորողների ինքնահաստատմանը ու ինքնագնահատմանը:

Հանրակրթության ոլորտում պայմանականորեն տարանջատվում են ներքին և արտաքին գնահատումները:

Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման,ուսուցողական,ստուգողական և այլ առաջադրանքների ստուգման միջոցով, դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի (դասարանի) ձեռքբերած գիտելիքներն ու կարողությունները, այլև նրա(դասարանի)զարգացման ընթացքը:

Արտաքին գնահատումը իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Արտաքին ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու,որակավորում շնորհելու կամ մասնագիտական ուսումական հաստատության ընդունելության մրցույթին մասնակցելու համար:

Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին դպրոցում,մարզում կամ հանրապետության ողջ տարածքում:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

- սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատում,
- կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովում,

- ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտում,
- դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտում,
- սովորողի անհատական աշխատանքի բովանդակության ու ծավալի ճշգրտում,
- սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորում,
- սովորողի անձնային որակների ձևավորում:

Սովորողի պատրաստվածության մակարդակն ու անձնային որակները որոշելու համար պետք է գնահատվեն՝

- չափորոշիչներով սահմանված գիտելիքների լրացումը,
- սովորածը գործնականում կիրառելու կարողությունների հմտությունները,
- մտավոր գործունեության մակարդակը,
- ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը (այս պարագայում գնահատումը չի կատարվում միավորային համակարգով):

Ըստ նպատակադրման՝ կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը՝

1. ընթացիկ գնահատում (ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը),
2. ամփոփիչ գնահատում (ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը),
3. հայտորոշիչ գնահատում (ճշգրտվում է ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը),
4. ձևավորող գնահատում (ճշգրտվում է դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, ուսումնական նյութը

յուրացնելու նվազագույն շեմը, դասավանդման մեթոդները),

5. հետազոտական գնահատում (հետազոտվում են ուսումնական գործընթացի կազմակերպումը և ուսուցման արդյունքները):

Ընթացիկ գնահատումը անընդհատ շարունակական գործընթաց է՝ ուղղված սովորողի կողմից ուսումնական ծրագրային)նյութի առանձին միավորի կամ դրա մի որոշակի մասի յուրացման աստիճանի բացահայտմանը: Ընթացիկ գնահատման շնորհիվ պարզվում են սովորողների, ուսուցիչների և դպրոցների կողմից պետական առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և արդյունքները, ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցիչների ձեռքբերումներն ու դժվարությունները:

Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքն ուղղորդելու, դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար: Այն կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում՝ բացառությամբ այն ժամանակահատվածի, երբ իրականացվում է վերջնական ամփոփիչ գնահատում:

Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Ընթացիկ գնահատման համակարգի համար ամրագրվում են հետևյալ կարևոր նպատակները.

ա/ ճշգրտել յուրաքանչյուր սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը,խթանել նրա ուսումնական ակտիվությունը.

բ/հայտորոշել (ախտորոշել) ուսուցման ընթացքն ու արդյունքները.
գ/շաղկապել ուսուցումը ուսումնառության հետ.
դ/փոխադարձ կապապահովել սովորողի,նրածնողի հետ.
ե/հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը մեկնարկային վիճակի նկատմամբ.
զ/ վերահսկել ուսումնական գործընթացը և արդյունքները:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

ա/ ուսուցանող (ձևավորող) գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորաբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով,դիտողություններով կամ մեկնաբանություններով,

բ/ամփոփիչ միավորային գնահատում,երբ ստուգվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի (թեմաների) յուրացման աստիճանը, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու,հաշվառելու միջոցով:

Ամփոփիչ միավորային գնահատումն իրականացվում է տվյալ ուսումնական նյութը ավարտելուց հետո և ունի վերահսկող դեր: Ուսուցանող գնահատումը կատարվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, այն հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Գնահատման այս երկու ձևերի նպատակային և գործառութային բազմազանությունը ապահովելու համար գործածության են երաշխավորվում ստուգման ու հայտորոշման հետևյալ տեսակները՝ բանավոր

հարցում, թեմատիկ գրավոր աշխատանք, ինքնուրույն աշխատանք տանը և դպրոցում, գործնական աշխատանք, խմբային և համագործակցային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճերով և կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Այս աշխատանքներում կիրառվում են ինքնագնահատումն ու փոխադարձ գնահատումը:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով, որոնք բխում են չափորոշիչներից: Դրանց մի մասն առավել կիրառելի է ուսուցանող գնահատման համար, իսկ որոշ տեսակներ՝ սովորողների ընթացիկ առաջադիմության արդյունքները պարզելու համար:

Առաջադրանքների կիրառումն իրականացվում է երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական: Ստուգման միջոցները պետք է լինեն հավաստի և հուսալի:

3.Ուսուցանող գնահատում

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգի կարևորագույն բաղադրիչն է ձևավորող կամ ուսուցանող գնահատումը:

Ուսուցանող գնահատումը նման է փորձությունը բռնած գյուտին կամ գիտական հայտնագործությանը, որը թեև մրցանակի չի արժանանում, բայց ավելի օգտակար կիրառություն է ունենում: Այսինքն՝ *միավորային գնահատման ուտիլիտարությունը (օգտակարությունը) ապահովվում է ուսուցանող գնահատմամբ*:

Ցանկացած աշխատանք արժանի է, որևէ գնահատականի՝ անկախ նրա դրական կամ բացասական լինելուց: Գնահատման և խրախուսանքի է արժանի նաև

աշակերտի աշխատանքը: Կրթական բարեփոխումների ներկա փուլի գլխավոր խնդիրը իր հետ բերում է համալիր մոտեցումների դրսևորում:Ընդ որում՝ նոր համակարգի առանցքում դրվում է ոչ թե աշակերտների գիտելիքների պարզապես ստուգումը,այլ նախ և առաջ գնահատման միջոցով ուսուցման գործընթացի խթանումը՝ այդ կերպփորձելովապահովել աշակերտի համակողմանի զարգացումը,գիտելիքները կարողությունների վերածելը: Արդի դպրոցում իրականացվում է ստուգում-գնահատում, քանի որ ծնողին առաջին հերթին հետաքրքրում է գնահատականը,այլ ոչ թե գնահատման հիմքը,այսինքն՝ աշակերտի գիտելիքներն ու կարողությունները : Փաստորեն դպրոցներում ուսուցիչները հիմնականում իրականացնում են ստուգողական աշխատանք, մինչդեռ պարտավոր են բացատրել, հաղորդել,մեկնաբանել,ի վերջո՝ սովորողների հետ միասին աշխատել՝ օգնելով,որնրանքյուրացնեն:

Մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով՝ թե՛ ուսուցիչները,և թե՛ ծնողները շատեն կենտրոնանում գնահատման 10միավորանոց համակարգի վրա, մինչդեռ պարզվում է,որ չափման միավորի ընտրությունը այդքան էլ կարևոր չէ:Կարևորը այս պարագայումուսուցանող գնահատումն է՝ գնահատման տարբեր տեսակների կիրառմամբ, այն է՝ ինքնագնահատումը՝ որպես ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների սերտացման երաշխիք: Ուսուցանող գնահատումը ոչ միավորային է, ասել է թե՝ բնավ էլ պարտադիր չէ,որ գնահատումը անպայման լինի թվանշանային արտահայտությամբ. ուսուցիչը պետք է կիրառի նաև խրախուսման, ոգևորելու այլ եղանակներ : Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացմանը առնչվող թերըմբռնումների,սխալների և դժվարությունների

բացահայտման, դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության շրջանակն ընդլայնելու համակարգված գործընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների կիրառումը:

Ուսուցանող գնահատման մեկշրջափուլը կարելի է [illegible]



Եթե միավորային գնահատումը կիրառվում է սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանն ստուգելիս, և այն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցել - հաշվառելու միջոցով՝ ունենալով վերահսկող դեր, ապա ուսուցանող գնահատման նպատակն է ճշգրտել դասավանդման նպատակահարմար մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարապատկերը, վերհանել ուսումնական նյութի յուրացմանը կապված խնդիրները և սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու անհրաժեշտության գիտակցմանը:

Ուսուցանող գնահատումը ցույց է տալիս, թե որքան շատ և ինչքան լավ են աշակերտները սովորել: Այս դեպքում կարևոր է հետադարձ կապի ապահովումը, այսինքն այն,որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից մշտապես ապահովվի հետադարձ կապ:Դառնչ միայն կօգնի աշակերտներին՝ իմանալու իրենց՝ ճիշտ կամ սխալ ուղու վրա լինելը,այլև կհեշտացնի վերջում գնահատելը :Աշակերտները տեղյակ կլինեն, թե ուսումնառության ճանապարհի յուրաքանչյուր

քայլը ինչպես են արել, հետևաբար վերջում դրված գնահատականը նրանց անակնկալ ի չիբերի:

Ուսուցանող գնահատումը.

- Կազմակերպում է դիտումներ, որ պարզի աշակերտների կողմից ուսումնական առաջադրանքի յուրացման աստիճանը և բացահայտի առաջադրանքի այն մասերը, որոնք աշակերտը չգիտի կամ չի կարողանել:
- «Նախատեսված է աշակերտներին հետադարձ կապով տեղեկացնելու իրենց ուսումնառության առաջընթացին, և ուսուցիչներին՝ ախտորոշելու, թե որ աշակերտներն են հաղթահարել դժվարությունները:

Ուսուցանող գնահատման մոդելն է.



Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում և չունի նիշային գնահատման նպատակ: Երաշխավորվում են ուսուցանող աշխատանքների հետևյալ տեսակները.

1. բանավոր հարցում,
2. տնային աշխատանք,
3. կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ,
4. ուսուցանող ստուգում,
5. բացհարցերով քննարկում,
6. ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
7. համագործակցային աշխատանք,
8. գործնական աշխատանք,

9. ռեֆերատ,նախագիծ:

Առաջադրանքներն ըստ բարդության գնահատվում են հետևյալ հատկանիշներով.

ա/ առաջին կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների իմացություն,պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն.կողմնորոշման և կատարման համար սովորողից չեն պահանջում ինքնատիպ(ոչ ստանդարտ) մոտեցումներ, միջնորդավորված քայլեր ու հիմնավորումներ.

բ/ երկրորդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների կայուն իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն,կողմնորոշման և կատարման համար ենթադրում են որոշակի հայտնի մեթոդներ, միջնորդավորված քայլեր, ոչ բարդ հիմնավորումներ՝ առանց ինքնատիպ մոտեցումների.

գ/ երրորդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն,կողմնորոշման և կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր, կառուցումներ,արտածումներ,հիմնավորումներ.

դ/ավելի բարդ ու դժվար առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութին վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր և խորը իմացություն,բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն,կողմնորոշման և կատարման համար ենթադրում են բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, օժանդակ կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ,կռահումներ.

ե/ գործնական աշխատանքների բարդության հատկանիշները որոշվում են ըստդրատեսակի:

Ուսուցանող գնահատման գործընթացն իր մեջ ներառում է նպատակին հասնելու համար գնահատման միջոցով ապացուցված տեղեկությունների հավաքագրում և վերլուծություն, որը հնարավորություն է տալիս որոշելու, թե երբ և ինչպես պետք է վերանայել ուսուցման գործընթացը ուսումնական նպատակին հասնելու համար:

Ուսուցանող գնահատման բաղադրիչները նախատեսված են՝

- ✓ ուսուցման կազմակերպման մեջ անհապաղ ճշգրտումներ կատարելու համար,
- ✓ ուսուցման կազմակերպման մեջ մոտ ապագայում ճշգրտումներ կատարելու համար,
- ✓ ուսուցման կազմակերպման մեջ վերջին պահին ճշգրտումներ կատարելու համար,
- ✓ ուսուցման կազմակերպման մեջ տակտիկական ճշգրտումներ կատարելու համար,
- ✓ դասարանական մթնոլորտի բարելավում կատարելու համար:

Երբ ուսուցիչը որոշում է իր աշխատանքի մեջ կիրառել ուսուցանող գնահատումը,նա

պետք է ընտրի, թե վերը նշված բաղադրիչներից որն է իրականացնելու: Այդ դեպքում նահանավորությունն կստանա ապահովել ճշգրիտ պլանավորումը, լավ նախապատրաստվելը և վերջնական հաջողությունը:

Ուսուցման կազմակերպման մեջ անհապաղ ճշգրտումներ կատարելու համար

Այս ճշգրտումները ուսուցիչը կատարում է հենց դասի ընթացքում՝ հավաքելով անհրաժեշտ տեղեկություններ դիտարկումների, իրավիճակի գնահատումների միջոցով: Որոշումը կայացվում է ուսուցչի գնահատման հիման վրա կամ աշակերտի կողմից նյութի յուրացման մասին հայտարարության (օրինակ՝ աշակերտների հարցերի, նրանց բանավոր պատասխանի) հիման վրա: Անհապաղ ճշգրտումը հնարավորություն է տալիս ուսուցչին արագ հասկանալ աշակերտների սխալները, ժամանակին դրանք ուղղել և չթողնել, որ այդ սխալ պատկերացումները ամրապնդվեն աշակերտի մեջ: Այս աշխատանքը արդյունավետ կատարելու համար ուսուցիչը պետք է նախօրոք պլանավորի աշակերտների հնարավոր սխալները, թյուրըմբռնումները, որոշի իր բացատրության մեթոդը, հնարները:

Ուսուցման կազմակերպման մեջ մոտ ապագայում ճշգրտումներ կատարելու համար

Դասը պարապելուց հետո ուսուցիչը վերլուծում է իր դասը, դասի ընթացքում հավաքված տեղեկությունները, աշակերտների գրավոր աշխատանքների արդյունքները և որոշում, թե հետագա մեկ-երկու դասերի ընթացքում ինչ փոփոխություններ է կատարելու ուսուցման գործընթացում:

Ուսուցման կազմակերպման մեջ վերջին պահին ճշգրտումներ կատարելու համար

Ուսուցման գործընթացը իրականացնելիս ուսուցիչը նյութին հատկացված ժամանակի վերջում ցանկանում է իմանալ թե որքանով են աշակերտները տիրապետում չափորոշչով պահանջվող գիտելիքներին: Այս դեպքում նա կարող է կատարել այսպես կոչված վերջին պահի ճշգրտումները: Ուսուցման համար ժամանակ դեռ կա, և եթե ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդյունքները դեռ չեն համապատասխանում չափորոշչային պահանջներին, ուսուցիչը կարողէ լրացուցիչ բացատրությունների, գործնական աշխատանքների կամ այլ հնարների միջոցով վերացնել թերությունները մինչև թեմատիկ գրավոր աշխատանք անցկացնելը:

Ուսուցման կազմակերպման մեջ տակտիկական ճշգրտումներ կատարելու համար

Ուսուցանող գնահատման այս բաղադրիչը հնարավորություն է տալիս աշակերտներին հասկանալ, ինքնուրույն գնահատել իրենց հաջողությունները և որոշել շարունակե՞լ սովորել այնպես, ինչպես սովորել են միչև այս գնահատումը,թե՞ փոխել իրենց նախընտրած սովորելու ձևը:Այն տեղեկությունները, որոնց հիման վրա աշակերտները գնահատում են իրենց հաջողությունները, տրամադրվում են ուսուցչի կողմից :Աշակերտները տարբեր ձևով են սովորում՝ կախված իրենց ունակություններից, աշխատասիրությունից, ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքից և այլն : Նրանք ուսուցչի տրամադրած տեղեկատվությունը՝ իրենց հաջողությունների մասին,օգտագործում են տարբեր ձևով,և տարբեր աշակերտներ տարբեր գնահատականներ կարող են տալ միևնույն իրավիճակին :Այն,ինչ մի աշակերտի համար կարող է առաջընթաց համարվել,չի

կարող բավարարել մյուսին:Ուստի ուսուցիչը պետք է այնքան լավ ընտրի աշակերտներին ներկայացվող տեղեկատվությունը, որ նրանք կարողանան ճիշտ գնահատել իրենց հաջողությունները:

Դասարանական մթնոլորտի բարելավում կատարելու համար

Այս գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին փոխել դասարանի ուսումնական մթնոլորտը: Մթնոլորտը փոխելու համար պետք է կատարել երեք փոփոխություն:

1. Փոխել ուսումնական ակնկալիքները:
2. Փոխել սովորելու համար պատասխանատվության դիրքորոշումը: Սա հնարավորություն է տալիս հասկանալու, որ ուսուցման արդյունքի, աշակերտների գիտելիքների որակի համար պատասխանատու է ոչ միայն ուսուցիչը, և հաջողությունը գալիս է այն ժամանակ, երբ աշակերտներն իրենց վրա են վերցնում սովորելու և համադասարանցիներին օգնելու պատասխանատվության բաժինը:
3. Փոխել գնահատման դերը դասարանում:Այս դեպքում դասարանական գնահատումը շատ ավելի դիտարկվում է որպես ապացույցների հավաքագրում՝ ուսուցման և սովորելու գործընթացում առաջացող բարդությունները հաղթահարելու համար և ոչ թե հաջողությունների արձանագրում թվանշանի ձևով:

Ուսուցանող գնահատման մասին խոսելիս չպետք է մոռանալ նշելու այս ձևի առավելությունը միավորային գնահատման նկատմամբ այն առումով,որ ուսուցանող գնահատման ժամանակ անպայմանորեն հաշվի են առնվում սովորողների առաջարկները, պահանջները, դիտողությունները և կամ մեկնաբանությունները : Այսինքն՝ ուսուցանող գնահատումը այս դեպքում առավելություն է

ունենում միավորային գնահատման նկատմամբ, որ ուսուցիչը միայն գնահատող չէ, այլ ուսուցիչն ու աշակերտը համագործակցում են՝ հասնելու մեկ ընդհանուր գաղափարի՝ չափորոշչային պահանջների իրականացմանը: Հետևաբար կարելի է ասել, որ ուսուցանող գնահատման հիմնական նպատակներից մեկը ուսուցիչ- աշակերտ կապի սերտացումն է՝ գիտելիքների յուրացման ավելի բարձր մակարդակ և արդյունավետություն ապահովելու համար:

Ձևավորող և ամփոփիչ գնահատումների բնութագրերի համեմատությունը

Ավարտական	ընթացիկ
Ծավալուն,դժվար	թեթև,հեշտ
Փակ	բաց
Հազվադեպ	հաճախակի
Մրցակցություն	մասնակցություն,
ընկերություն	
Վերահսկող	վերահսկող

Ձևավորող և ամփոփիչ գնահատումների համեմատությունը

Ամփոփիչ գնահատում	Ձևավորող գնահատում
Ուսուցման, ուսումնառության գործընթացների վերջում:	Ուսուցման, ուսումնառության գործընթացների ընթացքում:
Հաջորդվում է ոչ մի բանով:	Հաջորդվում է բարելավված ուսուցումով:
Նվաճումները հայտարարելու համար է:	Ուժեղ և թույլ կողմերը ճանաչելու համար է:
Պահանջում է բարձր ստույգություն:	Պահանջում է բարձր բովանդակային հիմնավորվածություն:

Համեմատաբար բարձր մրցակցություն:	Համեմատաբար ցածր մրցակցություն:

Ձևավորող և ամփոփիչ գնահատման մեթոդների համեմատությունը

Ամփոփիչ գնահատում	Ձևավորող գնահատում
Գրավոր քննություններ	Դասարանային հարցումներ
Բանավոր քննություններ	Զույգերով,խմբային քննարկումներ
Տարեվերջյան թեստեր	Աշակերտական հարցազրույցներ
Ստուգողական աշխատանքներ	Ախտորոշող թեստեր
Այլն	Թեստերի պատասխանների վերանայում
	Թղթապանակով գնահատում

Ուսուցանող գնահատման համար օգտագործվող հնարները

Հայտորոշիչ թեստեր - այն թեստերն են, որ հանձնարարվում են ուսուցման փուլի սկզբում կամ ընթացքում՝որոշելու համար՝արդյոք աշակերտն ունի անհրաժեշտ հմտություններ դրան հաջորդող նյութը յուրացնելու համար:Օրինակ՝ նախքան բուն նյութին անցնելը ուսուցիչը կարող է օգտագործել հայտորոշիչ թեստ՝պարզելու համար, թե արդյոք բոլորն են յուրացրել հիմնական հասկացությունները:

Բանավոր հարցում-սանման է դասարանում ավանդաբար կատարվող հարցմանը,սակայն ուսուցանող գնահատման ժամանակ տրվում են ավելի շատ բաց հարցեր,որոնց հնարավոր չէ միանշանակ պատասխանել,քան թե փակ հարցեր,որոնք ունեն միայն մեկ ճիշտ պատասխան: Աշակերտներն ու ուսուցիչները գնահատում են

պատասխանների որակը միասին և շարունակում սովորել այդ ընթացքում:

Ինքնագնահատում -Աշակերտներին հնարավորություն է տրվում գնահատելու սեփական աշխատանքը՝ օգտագործելով ուսուցչի կողմից ներկայացված չափանիշները: Աշակերտը սկսում է դատողություններ անել իր աշխատանքի բավարար կամ անբավարար վիճակի մասին: Ուսուցչի օգնությամբ կամ առանց օգնության աշակերտն սկսում է պարզել,թե իր աշխատանքում ինչի վրա պետք է ավելի շատ աշխատել:

Փոխադարձ գնահատում - Աշակերտները խրախուսվում են՝ լսելու իրար պատասխանները և նկատառումներ, առաջարկություններ հայտնել: Սրա համար պահանջվում է դրական փոխօգնության միջավայր:

Թեստի արդյունքների վերլուծություն - Աշակերտներին առաջարկվում է վերլուծել իրենց գրած թեստի արդյունքները և վերհանել իրենց ուժեղ և թույլ կողմերը: Այստեղ թեստից ստացված տեղեկությունները օգտագործվում են հաջորդ թեստում ավելի լավ արդյունքների հասնելու համար:

Աշակերտի կողմից կազմված թեստ-Թեմայի ուսուցման ընթացքում աշակերտներին առաջարկվում է կազմել թեստեր ինչպես իրենց, այնպես էլ իրենց դասընկերների համար:

Թեստ կազմելու և գնահատման չափանիշներ մշակելու գործընթացը նպաստում է նյութն ավելի լավ յուրացնելու:

Երբեմն ուսուցանող գնահատումը կարող է հետապնդել մի քանի նպատակ: Երբ էլ,որ իրականացնելու լինենք ուսուցանող գնահատումը, պարտավոր ենք մեզ հարց տալ.«Ինչու՞ եմ կատարում այս գնահատումը»,«Ինչպե՞ս եմ օգտագործելու արդյունքները»:

Ուսուցանող գնահատման կարևորագույն միջոցներն են ուսուցողական թելադրությունը,

փոխադրությունը, շարադրությունը, հարցազրույցները, թեստերը և այլն:

Գտնում ենք, որ ուսուցանող գնահատումը ամենից ավելի առնչվում է կրթության հոգեբանությանը, որի կարևորությունը ազատություններ է:

Եզրակացություն

1. Որպես ոչ միավորային գնահատում՝ ուսուցանող գնահատումը հետապնդում է չափորոշչային պահանջների հիմնավորիրականացում:
2. Ուսուցանող գնահատման ժամանակ կարևորվում են ոչ միայն մանկավարժական, նաև հոգեբանական գործոնները:
3. Քանի որ ուսուցանող գնահատումը առավել երկարատև, խոր և հիմնավոր գործընթաց է, ապա կարծում ենք, որ ուսուցիչը պիտի գործ ունենա միայն գնահատման այս տեսակի հետ, իսկ միավորային գնահատումը դառնա որպես արտաքին գնահատում, ինչի շնորհիվ գնահատականը ձեռքբերի բացարձակ արդար բնույթ ոչ միայն մեկ դասարանի, մեկ դպրոցի կամ քաղաքի, այլ նաև տվյալ պետության կտրվածքով:

Օգտագործված գրականություն

1. https://www.egov.am/u_file/decrees/kar/2011/07/11_1088.pdf
2. ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. http://www.krotov.info/lib_sec/shso/71_slas5.html
4. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման ուղեցույց (Գնահատման համակարգ),ԾԻԳ,Երևան,Տիգրան Մեծ,
5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան 2003թ.
6. Մարդ և հասարակություն,2009թ.,N4: